Հաստատում եմ՝

Տնօրեն Ա. Բաբայան

30.08.2023թ.

«Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ

ՄԿԱ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ՄԳԹ, Դոցենտ Սոնա Դավթյան

Ներածություն

Դպրոցում դաստիարակության գործընթացի զարգացումը պետք է նպաստի սովորողների դաստիարակության հիմնախնդիրների ճիշտ լուծմանը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային հոգեբանական առանձնահատկությունները: Դաստիարակությունը պետք է կազմակերպվի այնպիսի համակարգում, որը կնպաստի ուսուցման և դաստիարակության 2 հիմնական բաղադրիչների արդյունավետ համագործակցությանը: Դաստիարակության թիվ 1 խնդիրը դպրոցում այնպիսի միջավայրի ստեղծումն է, որը կօգնի ձավորել սովորողների արժեքային մի համակարգ, որը հնարավորություն կստեղծի սովորողին հասարակության մեջ արժանի և հարմարավետ տեղ գտնել: Ուստարվա աշխատանքների ճիշտ պլանավորումը թույլ կտա ժամանակին մեծ պատասխանատվությամբ կատարելու այն խնդիրները, ինչին կոչված են լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի մանկավարժական կոլեկտիվի անդամները:

Յուրաքանչյուր ուսուցիչ իր առարկայական գիտելիքները պետք է զուգակցի մանկավարժական, հոգեբանական հմտություններով: Յուրաքանչյուր ուսուցիչ, դասղեկ դաստիարակության, հոգեբանության բոլոր հարցերի պատասխանները կարող է քննարկել դասղեկ-դասվարական մեթոդ-միավորումներում: Կրթադաստիարակչական գործի վարողը ուսուցիչն է, որից կախված է դաստիարակության գործի հաջողության ամենագլխավոր նախապայմանը՝ մատաղ սերնդի ճիշտ դաստիարակությունը: Բացի դասավանդված առարկայի անթերրի իմացությունից, ուսուցիչը պետք է տիրապետի մանկավարժական վարպետությանը, զանազան մանկավարժական մեթոդներին, որոնք պետք է ուղեկցվեն մանկավարժի հասարակական բարոյական հատկանիշներով:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի հաջողության համար անհրաժեշտ է ուսումնասիրել երեխաների անհատական հոգեբանությունը, նրանց կարողությունները, ընդունակությունները: Կրթության դաստիարակության նպատակը պետք է լինի սովորողների հայրենասիրության, առաքինության պատվաստումը՝ պահպանելով ազգային սովորույթները, մատաղ սերնդի մոտ վառ պահելով ազգային հայրենասիրական ոգին:

Մանկավարժական զրույցների, դասղեկի ժամերի, բանավեճերի ձևով սովորողներին պետք է ծանոթացնել մարդկային բարոյական այնպիսիհատկանիշներին, ինչպիսիք են երախտագիտությունը, ազնվությունը, շիտակությունը, համբերատարությունը, աշխատասիրությունը, բարությունը, ծնողական սերը, սերը հայրենիքի հանդեպ: Կրթության դերն աճում է, միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության արժեքային այլ որակներ:

Բարոյահոգեբանական դաստիարակության այս խնդիրները պետք է հանդիսանան այն ուղղությունները, որոնք կօգնեն մատաղ սերնդի մեջ ձևավորելու նրա բարոյական դեմքը: Մեզ՝ մանկավարժներիս, լրջորեն պետք է զբաղեցնի դպրոցականի վարքի ուսումնասիրման խնդիրը:Երեխայի վարքի ուսումնասիրման առաջին նախապայմանը երեխային սիրելն է, նրան հարգելն ու նրան երբեք չվիրավորելը:Աշակերտի հանդեպ պետք է լինել համբերատար, մեղմ ու ներողամիտ:Դաստիարակության հաջողության գաղտնիքը պայմանավորված է մանկավարժի անձնավորության, նրա բարոյական անբասիր վարքագծով, անձնական օրինակով, որով ստեղծվում է նրա հեղինակությունը:

Բարոյական դաստիարակությունից զատ հանրակրթության նպատակն է երեխաների աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական հոգևոր, ռազմա-հայրենասիրական, իրավական ունակությունների համակողմանի, ներդաշնակ զարգացումը, նրանց պատշաճ վարքի, վարվելակերպի ձևավորումը: Այսօրվա դպրոցականի՝ մատաղ սերնդի հայեցի դաստիարակությունն ապահովելու նպատակով պետք է իրականացնել պետության կառավարության դպրոցի բարեփոխումներ ը՝ 12-ամյա ուսուցման անցնելու վերաբերյալ: Այս ամենն իրականացնելու համար նպատակահարմար է դպրոց-աշակերտ դաստիարակության աշխատանքները տանել համապատասխան ուղղություններով.

- ներդպրոցական խնդիրներ
- դասղեկական աշխատանք /սեմինար խորհրդակցություններ/
- ուսումնադաստիարակչական խնդիրներ
- բարոյա-գեղագիտական դաստիարակություն
- իրավական դաստիարակություն
- բնապահպանություն և սպորտ
- աշխատանք գրադարանի հետ
- աշխատանք դժվար դաստիարակվող անապահով ընտանիքների երեխաների հետ
- աշակերտական ինքնավարություն
- աշխատանք ծնողական խորհրդի հետ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ներդպրոցական վերահսկում

Թիվ	Բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1.	Վերանայել նախորդ ուստարվա դաստիարակչական աշխատանքների ամփոփիչ հաշվետու զեկուցումը և դրա հիման վրա կազմել նոր ուստարվա աշխատանքային պլան:	14-15 Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ	
2.	Դաստիարակչական տարեկան աշխատանքային պլանի մշակում և ներկայացում հաստատման:	14-15 Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ	
3.	Դասասենյակների նախապատրաստում:	14-15 Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	
4.	Ճշտել աշակերտների դասագրքերով ապահովվածության աստիճանը:	14-15 Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ Գրադարանավար	
5.	Կազմակերպել հանդիպում 1-ին դասարանի երեխաների և 4-5-րդ դասարան փոխադրված աշակերտների, ծնողների և նոր նշանակված դասղեկի և դասվարների հետ:	16-17 Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, Ուսուցիչներ, Դաստիարակներ	
6.	Սեպտեմբերի մեկ <<գիտելիք>> միջոցառման նախապատրաստում:	Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, Ուսուցիչներ, Դաստիարակներ	
7.	Դաստիարակների աշխատանքային պլանների մշակման վերհսկում և ներկայացում հաստատման:	18-19 Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ	
8.	Համադպրոցական	22-25 Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ	

	միջոցառումների պլանավորում և կազմակերպում:			
9.	Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամեր և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
10.	Յուրաքանչյուր դասարանում կազմավորել ծնողխորհուրդ (բաղկացած 4 հոգուց),ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը:	27-30 Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
11.	Կազմակերպել և անցկացնել հաստատության ծնողական խորհրդի ընտրություններ: Ծնողական խորհրդի նախագահի հաշվետվություն: Ծնողական խորհրդի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:	01-02 Հոկտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
12.	Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում կազմակերպել և անցկացնել հատատության ծնողական խորհուրդի ընդհանուր ժողով:Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց – ընտանիք կապը:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
13.	Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
14	Սահմանել դպրոցում բաց դռների օր,ապահովել ծնող-ուսուցիչ կապը:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
15	Աջակցել դպրոցի ինքնավարությանը՝ 1.Դասարանական խորհուրդների	10-15 Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	

	ձևավորում 2.Աշակերտական խորհրդի ձևավորում 3.Աշակերտական խորհրդի հանձնախմբերի ձևավորում:			
16.	Կազմակերպել և անցկացնել աշակերտական խորհրդի նախագահի և ընտրական հանձնախմբի անդամների ընտրություններ:	20 Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ	
17.	Դասապատրաստման մշտադիտարկում:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ	
18	Դասալսումների համաձայնեցում և պլանավորում:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ	
19.	Սեմինար-խորհրդակցություններ դասղեկների, դաստիարակների հետ:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
20.	Մասնակցել խմբակների աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, Դաստիարակներ	
21.	Կազմել և հաստատել ուսուցիչների, դաստիարակների և աշակերտների հերթապահության գրաֆիկ:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
22.	Սահմանել կարգ ` 1.Յուրաքանչյուր սովորող և աշխատող դպրոցում լինի դասերը սկսվելուց 5-10 րոպե առաջ`ըստ <<Աշխատանքային ժամանակացույցի>> հիմք ընդունելով`<<Ներքին կարգապահական կանոնները>>:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
23.	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների,անհարգելի բացակայությունների նկատմամբ,ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ	

	դեպքում առաջնորդվել օրենքի սահմանված կարգով:			
24.	Աշխատանք տանել սովորողների վարքի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
25.	Հսկողություն իրականացնել սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
26.	Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը:	20-25 հոկտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
27.	Սոցիալապես անապահով երեխաների հաշվառում:	30 -31 Հոկտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
28.	5-12-րդ դասարաններում կազմակերպել և անցկացնել բանավեճեր, քնարկումներ, կլոր սեղաներ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
29.	Անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն և համապատասխան աշխատանքի պլանավորում:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
30.	Վարքային առանձնահատկություն ունեցող աշակերտներին, ըստ նրանց կարողությունների ու հետաքրքրությունների ընդգրկել արտադպրոցական խմբակներում:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
31.	Համագործակցել գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	

32.	Ուշադրության կենտրոնում պահել 1-12-րդ դասարանի վարքային բարդ առանձահատկություններ ունեցող աշակերտներին և համապատասխան աշխատանք տանել նրանց ծնողների հետ:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
33.	Դպրոցի նյութատեխնիկական բազայի զարգացման ուղղությամբ համագործակցություն տնտեսվարի հետ:	01-05 դեկտեմբեր	ՄԿԱ տեղակալ, վարչատնտեսական աշխ. գծով տեղակալ	
34	Համագործակցություն ոստիկանության անչափահասների գործերով համապատասխան աշխատաքցի հետ:	06-10 Դեկտեմբեր	ՄԿԱ տեղակալ	
35.	Աջակցել հասարակական կազմակերպությունների կողմից դպրոցում անցկացվող միջոցառումների, դասընթացների և այլ աշխատանքների իրականացմանը:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
36.	Ստեղծել վահանակ <<Ու՞ր գնալ սովորելու>>՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար:	15-20 Դեկտեմբեր	ՄԿԱ տեղակալ	

Իրավական դաստիարակություն

Հ/Հ	Բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1.	Դպրոցի կանոնադրության, աշակերտների վարքի լիարժեք իմացությունը լրացնել իրավական դաստիարակության հարցերին վերաբերող միջոցառումներում, բանավեճերում, զրույցներում և դասղեկի ժամերին:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
2.	<<Երեխայի իրավունքների>> հռչակագրի քննարկում և լուսաբանում:	05-10 դեկտեմբեր	ՄԿԱ տեղակալ, դաստիարակներ	
3.	<<Մարդու իրավունքների>> հռչակագրի քննարկում և լուսաբանում:	11-12 դեկտեմբեր	ՄԿԱ տեղակալ, դաստիարակներ	
4.	Դասղեկի ժամին անցկացնել <<Մարդու իրավունքների>>օր (մարդու՝ ընտանիքում, հասարակության մեջ իրվունքների ծագումը, զարգացումը) թեմայով:	20 դեկտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
5.	Հանդուրժողականության հռչակագրի քննարկում՝ այդ թեմայով դասղեկական ժամերի կազմակերպում:	22 դեկտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
6.	Դպրոցում կազմակերպել աշակերտական ինքնավարության օրեր:	01-10 փետրվար	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
7.	Անչափահասների տեսչության աշխատակիցների հետ համատեղ կազմակերպել զրույց –զեկուցումներ սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման և կանխարգելման մասին:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
8.	Դասղեկի ժամերին աշակերտներին ծանոթացնել իրավական երկիր և ժողովրդավարություն հասկացությունների հետ:	15-16 փետրվար	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
10.	Դպրոցում, դասասենյակներում ամրագրել վարքի, վարվեցողության կանոնները, ստեղծել սովորողների իրավունքները և պարտականությունները լուսաբանող վահանակ:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Հ/Հ	Բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1.	Դաստիարակչական ժամերին աշակերտներին ծանոթացնել ազգային ոգու պահպանման, հայեցի դաստիարակության կարևոր ուղությունների՝ ռազմահայրենասիրական, ազգային գաղափարախոսության տեսակետներին:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, Դաստիարակներ	
2.	Լրացուցիչ աշխատանքների իրականացում: <<Հայրենիքը մեծագույն արժեք է, իսկ հայրենասիրությունը՝ սրբազան զգացում>> թեմաներով դասախոսությունների շարք:	25-30 Ապրիլ	ՄԿԱ տեղակալ, Դաստիարակներ	
3.	<<Վարդանանց տոն>> հայրենասիրական դաս: Հայ զինվորի և հայոց բանակի հերոսական անցյալի և նոր պատմության էջերը:	01-05 Մայիս	ՄԿԱ տեղակալ, Դաստիարակներ	
4.	Պատրաստել ՀՀ հերոսների մասին պատմող, անկախության 32-րդ ամյակը լուսաբանող վահանակ, ռեֆերատ աշխատանքներ,միջոցառում ցերեկույթ:	08-10 Մայիս	ՄԿԱ տեղակալ, Դաստիարակներ	
5.	Հայոց բանակի հերոսներին նվիրված թեմատիկ զրույցներ, ռեֆերատ աշխատանքներ,միրոցառում ցերեկույթ:	15-20 Մայիս	ՄԿԱ տեղակալ, Դաստիարակներ	
6.	Այցելություն Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշպանության համար զոհված մարտիկների հուշակոթողներին:	Ապրիլ Մայիս	ՄԿԱ տեղակալ, Դաստիարակներ	

Գեղագիտական դաստիարակություն

Հ/Հ	Բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1.	Աշակերտների գեղագիտական դաստիարակության ձևավորման նպատակով կազմակերպել միջոցառումներ,թաթերական ներկայացումներ,էքսկուրսիաներ, այցելություն թանգարաններ և այլ մշակույթային օջախներ:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
2.	Կազմակերպել կլոր սեղան,թեմատիկ զրույցներ մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում խորագրով:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
3.	Շնորհալի աշակերտների ուժերով կազմակերպել ցուցահանդեսներ:	Նոյեմբեր-Դեկտեմբեր; Ապրիլ-Մայիս	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
4.	Զուգահեռ դասարանների միջև կազմակերպել պատի թերթի մրցույթներ ըստ տոնացույցի:	Դեկտեմբեր; Մարտ-Ապրիլ	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
5.	Ազգային ավանդույթներ և տոներ շրջանակում կազմակերպել զրույցներ, ռեֆերատ աշխատանքներ, հանդեսներ:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
6.	Մայրության և գեղեցկության օրվա շրջանակում կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ	Մարտ-ապրիլ	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
7.	Բնության գեղեցիկ գույներին նվիրված կազմակերպել միջոցառում-ցերեկույթ <<Աշնան տոն>> խորագրով:	Հոկտեմբեր-Նոյեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	

8.	Ամանորի շեմին կազմակերպել ամանորյա հանդեսներ:	Դեկտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
9.	Դաստիարակչական ժամերին անցկացնել թեմատիկ զրույցր <<Վարքի և վարվեցողության կանոնները>> թեմայով:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	

Էկոլոգիա– հիգիենա

Հ/հ	Բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1.	Աշնանայի և գարնանայի ծառատունկի օրերին մերձդպրոցական տարածքում ծառատունկի կազմակերպում:	Սեպտեմբեր; Մարտ	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
2.	Մերձդպրոցական տարածքի մաքրում,կանաչապատում:	Սեպտեմբեր; Մարտ	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
3.	Կլոր սեղան՝ <<Երկրագունդը բոլորիս տունն է>>:	01-10 Մարտ	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
4.	Մեր մոլորակը միջոցառման կազմակերպում:	15-20 Ապրիլ	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
5.	Աշակերտների անձնական հիգիենայի նպատակով ուշադրության կենտրոնում պահել դասղեկ-բուժքույր-ծնող փոխադարձ կապը:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	

Ֆիզիկական առողջությանն ուղղված դաստիարակություն

Հ/Հ	Բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1.	Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում,բարելավում: Նախապատրաստական աշխատանքների կազմակերպում:	14-15 Սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
2.	Նախապատրաստել մասնակցելու տարածքային, համայնքային, մարզային միջդպրոցական սպորտային մրցույթներին: Այդ կապակցությամբ դպրոցում անցկացնել սպորտային համադպրոցական մրցույթներ:	Ապրիլ-Մայիս	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
3.	Քննարկումներ աշակերտների ֆիզիկական դաստիարակության խնդիրների զարգացման, բարելավման վերաբերյալ: Սպորտային խաղերի, զվարճանքների կազմակերպման միջոցառումների շարք:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
4.	Մեծացնել սպորտային խմբակներ հաճախող երեխաների թիվը, որը կնպաստի նրանց ֆիզիկական առողջությանը:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
5.	Ուստարվա ընթացքում կազմակերպել <<Առողջության օր>>: Դպրոց հրավիրել բժիշկներ տարբեր մասնագիտությունների գծով: Կազմակերպել զրույց-զեկուցումներ:	Մարտ-Ապրիլ	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
6.	Կլոր սեղան ուղղված ՁԻԱՀ-ով հիվանդների հանդեպ հոգատարությանն ու անխտրական վերաբերմունքի վերաբերյալ:	01 Դեկտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
7.	Կլոր սեղան, զրույց – զեկուցումներ ուղղված ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների, և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելելու և դրանց վնասների մասին:	15-20 Դեկտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	

Հոգևոր դաստիարակություն

Հ/Հ	Բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1.	5-12-րդ դասարանների հոգևոր դաստիարակություն իրականացնել <<Հայ եկեղեցու պատմություն>> դասընթացի ժամանակ:	15-20 Փետրվար	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
2.	Հայ առաքելական եկեղեցու տոնացույցային օրերի լուսաբանում: Սուրբ Ծնունդ Սուրբ Սարգիս Տիառնընդառաջ և այլն:	Դեկտեմբեր	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	

Աշխատանքային դաստիարակություն

Հ/Հ	Բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1.	Աշխատանքային հմտությունների ուղղությամբ կառուցողական վերաբերմունքի խթանում,մասնագիտական կողմնորոշում:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
2.	Միջոցառումները (ծառատունկ,շաբաթօրյակ և այլն) ուղղված բակի,համայնքի բարեկարգման աշխատանքներին:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
3.	Աշխատանքին, արհեստներին նվիրված զրույցներ, զեկույցներ;	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
4.	Դպրոցի շենքի ,գույքի պահպանման,նորոգման աշխատանքները աշակերտների համար դարձնել աշխատանքային դաստիարակության,աշխատանքի,մարդու նկատմամբ վերաբերմունքի դրսևորման լավագույն միջոց:	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	
5.	Ստեղծել աշխատանքային խմբեր դպրոցի կահույքի նորոգման կամ դպրոցի տնտեսության բարելավմանն աշխատանքների համար	Տարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Ուսուցիչներ, Դաստիարակներ	

[1]

[1] Կից ներկայացված են արտադասարանական, արտադպրոցական միջոցառումների, ինչպես նաև ընդհանուր դաստիարակչական աշխատանքների օրացույցային պլանը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ
1	Գիտելիքի օրվան նվիրված կլոր-սեղան քննարկումներ	14;15.09.2023	ՄԿԱ
2	Կազմակերպել միջոցառումներ ,,Կանաչ բակ,կանաչ դասարան,, թեմաներով	Սեպտեմբերի I-II շաբաթ	դասղեկներ
3	- Դասղեկների աշխատանքային պլանների հաստատում -Դասագրքերի բաշխման և վարձավճարների հավաքման աշխատանքների կազմակերպում	I-շաբաթ	գրադարանավար
4	Անցկացնել զրույցներ, կազմել պատի թերթեր Հայաստանի անկախության օրվան նվիրված	Սեպտեմբերի II շաբաթ	7-12-րդ դաս. դասղեկներ
5	Անցկացնել զրույցներ դպրոցը սպասարկող անչափահասների գծով տեսուչի հետ:	Տարվա ընթացքում	6 – 12 դաս. Դասղեկներ:Անչափահասների գծով տեսուչ
6	Կազմակերպել միջոցառումներ, , կազմել պատի թերթեր նվիրված ուսուցչի օրվան և թարգմանչճաճ տոնին:	Հոկտեմբերի 1 - 10	դասղեկներ
7	Այցելություններ, էքսկուրսիաներ պատմամշակույթային կոթողներ, թանգարաններ	Տարվա ընթացքում	դասղեկներ
8	Կազմակերպել զրույցներ թեմայով	Տարվա ընթացքում	դասղեկներ
9	Կազմակերպել միջոցառումներ , կազմել պատի թերթեր , թեմաներով	Հոկտեմբեր, նեյեմբեր	դասղեկներ
10	Հետևել ձմեռային ժամանակաշրջանի անցման հետ կապված կազմակերպչական աշխատանքներին	դեկտեմբեր	ՄԿԱ

11	Տարեմուտի տոնական հանդեսների, միջոցառումների, պատի թերթերի լույս ընծայում, դասարանների տոնական ձևավորում	դեկտեմբեր	դասղեկներ

12	Հետևողական աշխատանք տանել դասղեկների հետ վարքային առանձնահատկություններ ունեցող աշակերտների հետ - պահպանել սերտ կապը ծնողների հետ - հետևել և մասնակցել ծնողական ժողովների անցկացմանը - անցկացնել դասալսումներ դասղեկի ժամերի	Տարվա ընթացքում	դասղեկներ
13	Անցկացնել զրույցներ արտակարգ իրավիճակների և բնական աղետներից պաշտպանվելու մասին	Նոյեմբեր- դեկտեմբեր	6-12-րդ դաս. դասղեկներ
14	Հետևել դասղեկների մ/մ աշխատանքներին	տարվա ընթացքում	ՄԿԱ
15	I կիսամյակի ամփոփում	դեկտեմբեր	ՄԿԱ դասղեկներ
16	Բանակի օրվան նվիրված միջոցառումներ, զրույցներ,պատի թերթեր	Հունվար	դասղեկներ զինղեկ
17	Գրական ցերեկույթներ նվիրված հայ դասականներին	տարվա ընթացքում	դասղեկներ հ.լեզվի ուսուցիչներ
18	Ազգային տոներին նվիրված միջոցառումներ	տարվա ընթացքում	դասղեկներ
19	Սպորտային խաղերի և շախմատի օլիմպիադայի անցկացում	տարվա ընթացքում	դասղեկներ ֆիզկուլտուրայի ուսուցիչ
20	Միջոցառումներ նվիրված գարնանը և գարնանային տոներին	Մարտ	դասղեկներ
21	Զրույցներ, ֆիլմերի դիտում նվիրված ապրիլի 24-ին	Ապրիլ	դասղեկներ
23	Շաբաթօրյակներ, սանիտարական օրեր	Ապրիլ-մայիս	դասղեկներ տնտեսվար
24	II-կիսամյակի ամփոփում	Մայիս	ՄԿԱ

հատուկ կրթահամալիրի
2023-2024 ուստարվա
միջոցառումների ժամանակացույց

	Միջոցառման օր	Ժամկետ	Կատարող
1.	Գիտելիքի օր /1-ին դասարանցիներ/	1.09.2023թ.	Տնօրինություն Դասվարներ, դասղեկներ
2.	Դասարանային խորհուրդների ձևավորում	06.09. 2023թ.	Դասղեկ-դասվարներ
3.	Համադպրոցական աշակերտական և ծնողական ժողովներ	07.09.2023 թ.	Տնօրինություն, ծնողներ, աշակերտներ
4.	Այցելություն <<Zoo zoo Land>> էկզոտարիում	14.09.2023թ.	Դաստիարակներ Ն/պ; 1-5 -րդ դասարաններ
5.	ՀՀ անկախության օրվան նվիրված միջոցառումներ	20.09. 2023թ.	1-4-րդ դասարանների դասվարներ
6.	Աշխորհուրդի անդամների և նախագահի ընտրություն	15-25.09. 2023թ.	Աշակերտներ, տնօրենություն, դասղեկներ
7.	Այցելություն <<HAPPIUM MUSEUM>> թանգարան	23.09.2023թ.	Դաստիարակներ Ն/պ; 1-5 -րդ դասարաններ
8.	Ուսուցչի օրվան նվիրված միջոցառումներ	05.10. 2023թ.	աշակերտներ
9.	Այցելություն <<Մաչանենց տուն>>; <<Սուրբ Գայանե>> եկեղեցի	06. 10. 2023թ	4-րդ դասարան
10.	Արցախյան 44-օրյա պատերազմի տարելիցի նպատակով այցելություն Եռաբլուր, հանդիպումներ անմահացած հերոսների ընկերների, բարեկամների հետ	Հոկտեմբեր-դեկտեմբեր	Աշակերտներ, ուսուցիչներ, ծնողներ
11.	<<Ի՞նչ գույն ունեն զգացմունքները>> խորագրով ներկայացում/ <<Խաղարան>> ինտերակտիվ թատրոնի մասնակցությամբ	11.10.2023թ.	Դաստիարակներ Ն/պ; 1-6 -րդ դասարաններ
12.	Քննարկումներ պատերազմի մասին ռազմագիտության դասասենյակում	Հոկտեմբեր	Ռազմագիտության ուսուցիչ, շրջանավարտ զինվորներ
13.	Այցելություն <<Ջայլամների Էկո պուրակ>> ք.Եղվարդ	02.11.2023թ.	Դասղեկ, Դաստիարակ 7-8-րդ դասարաններ,
14.	Այցելություն <<Բուսաբանական այգի>>	02.11.2023թ.	Դաստիարակ Ն/Պ
15.	Այցելություն <<Տառերի պուրակ>>	03.11.2023թ	4-րդ դասարան
16.	Այցելություն Ե.Չարենցի տուն թանգարան	25-30.2023թ.	Դասղեկներ 6-7-րդ դասարաններ
17.	Ուսումնաճանաչողական էքսկուրսիա <<Կենդանաբանական այգի>>	24.11.2023թ.	Դասղեկ, Դաստիարակ 1-ին դասարան
18.	Այցելություն Գառնիի երկրաֆիզիկական դիտարան	30.11. 2023թ.	Դասվարներ, 10-12-րդ դասարաններ
19.	Այցելություն Փարաջանովի թանգարան	20.-30.11.2023թ.	Աշխորհուրդ, ՄԿԱԳՏ
20.	Այցելություն Ագուլեցու տուն թանգարան	09.11.2023 թ.	Աշխորհուրդ, ՄԿԱԳՏ
21.	Այցելություն <<Մատենադարան>>	29.11.2023թ.	Դասղեկ, Դաստիարակ 7-րդ դասարան,

22.	Հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված զրույցներ	16.11. 2023թ.	5-7 դասարաններ
23.	«Մեր դպրոցի շնորհալիները» շարքի վարում	Ողջ տարվա ընթացքում	Աշխորհուրդ
24.	Պաշտպանության նախարարության պատմության թանգարան	20.11. 2023թ.	ՆԶՊ ուսուցիչ, ՄԿԱԳՏ Աշխորհուրդ
25.	Հաշմանդամների միջազգային օրվան նվիրված Կլոր սեղան «Բոլորին պետք է տրվի հավասար հնարավորություններ» թեմայով	02.12. 2023թ.	Աջակցող թիմ
26.	Ծառատունկ/Ճաբաթօրյակ	05.12. 2023թ.	Աշխորհուրդ
27.	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր, վիկտորինա «Աշակերտների վարքը երկրաշարժի ժամանակ»	07.12. 2023թ.	ՆԶՊ
28.	Այցելություն Էջմիածնի մայր տաճար; <<Մաչանենց տուն>>	10. 12- 15. 12. 2023թ	Դասղեկ, Դաստիարակ 6-րդ դասարան
29.	Մարդու իրավունքների պաշտպանության օրվա շրջանակներում «Երեխայի իրավունքներ» հռչակագրի ուսումնասիրում և ներկայացում 6-8-րդ դասարաններում	09.12. 2023թ.	Աշխորհուրդ
30.	Ամանորյա միջոցառումներ	16-23.12. 2023թ.	1-8 դդ.
31.	Տոնական զարդարանքների ամփոփում	22.12. 2023թ.	Աշխորհուրդ, ուսուցչական համակազմ
32.	Հրաժեշտ 2023 Նախատոնական համադպրոցական միջոցառում	23.12. 2023թ.	9-րդ դ. Դասղեկներ, դասավանդող ուսուցիչներ
33.	Հայոց բանակի օրվան նվիրված միջոցառումներ «Հայկական բանակը» խորագրով:	26.01. 2024 թ.	Դասղեկներ
34.	«Իմ հերոսը» խորագրով շարադրությունների մրցույթ	30.01.2024թ.	Աշխորհուրդ, ՄԿԱԳՏ, Հայոց լեզվի ուսուցիչներ
35.	Տեառնընդառաջ	13.02. 2024թ.	5-9 դասարաններ
36.	Գիրք նվիրելու օր	17.02. 2024թ.	համադպրոցական
37.	Ասմունքի մրցույթ	20.-30.02.2024 թ.	Հայոց լեզվի մ/մ, տնօրենի տեղակալներ
38.	<<Ազնավուրը Ազնավուրի մասին>> խորագրով այցելություն հեղինակի թանգարան	25.02.-28.02.2024թ	Դասղեկ-Դաստիարակ 6-րդ դասարան
39.	«Գարնանային զարթոնք» դասարանական միջոցառումների շարք	01.03. 2024 թ.	Դասղեկ-դասվարներ
40.	Կանանց միջազգային օր «Գեղեցիկը կփրկի աշխարհը» խորագրով	09.03. 2024թ.	Աշխորհուրդ
41.	Դասարանական այցեր թանգարան	15. -30.03. 2024 թ.	7-րդ դդ.
42.	Թատրոնի միջազգային օր/Մնջախաղ	27.03. 2024 թ.	Աշխորհուրդ
43.	Սբ.Զատիկ	--.04. 2024 թ.	Դասղեկներ Դասվարներ, աշակերտներ
44.	Անհատական աշխատանքների	07. -10. 04. 2024 թ.	Տեխնոլոգիայի ուսուցիչներ

	ցուցադրություն		
45.	Խոնարհումի օր Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին	24.04. 2024 թ.	Դասղեկներ, դասվարներ
46.	Եռատոն և դրան նվիրված միջոցառումների և այցերի շարք	8-28.05.2024թ.	Համադպրոցական
47.	Վերջին դաս	26. 05. 2024 թ.	12-րդ դ.

Պատասխանատու՝ Սոնա Դավթյան

Տնօրեն՝ Արմինե Բաբայան